«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը

Դաստիարակ՝ Ալիտա Ավագյան

Մանկապարտեզ՝ Երևանի, Ավան վարչական շրջանի թիվ 56 մ/մանկապարտեզ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Գլուխ 1. Ժամանակակից մանկավարժ մասնագետն ու նրա մասնագիտական կոմպետենցիան----------5

Գլուխ 2. Համագործակցային մանկավարժության էությունը, կարևորությունը մանկավարժի մասնագիտական հմտությունների զարգացման գործում----------8

Գլուխ 3. Մանկավարժի մասնագիտական կարողությունների զարգացումը վերապատրաստումների, հետազոտական ու ստեղծագործական գործունեության միջոցով----------11

Գլուխ 4. Օրինակելի պարապմունք----------16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Անցումը նոր պետական կրթական չափորոշիչներին դրեց ուսումնական գործընթացի նորովի կազմակերպման խնդիրը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր փուլերում՝ մանկապարտեզից

մինչև համալսարան: Կարևոր են մանկավարժների պատրաստվածության մակարդակի պահանջները: Շեշտը դրվում է այնպիսի մասնագետների վրա, ովքեր ի վիճակի են նախաձեռնել սաների կրթական և ճանաչողական գործունեության կազմակերպման և կառավարման արդյունավետ մոդելների որոնումը: Մասնագիտական կոմպետենտությունը և մրցունակությունը ժամանակի դպրոցի ու կրթության առաջնահերթ պահանջ է:

Ժամանակակից հանրակրթության բովանդակությունը հիմնովին փոփոխված է և անհամեմատելի օրինակ 3-4 տասնամյակ առաջ գոյություն ունեցած կրթության պահանջների հետ: Այժմ արդիական չէ իմանալ իմանալու համար հայեցակարգը, քանի որ զուտ փաստագրական նյութի կարիք անհատը չունի: Ցանկացած տեղեկատվություն հասանելի է յուրաքանչյուրին ցանկացած վայրում: Ուստի ժամանակակից անհատի առջև ծառացած է նյութի մտածված օգտագործման, սեփական գիտելիքին վերլուծաբար մոտենալու և այլ նմանատիպ խնդիրներ:

Բարձրագույն մանկավարժական կրթության արդիականացման պայմաններում սուր է մանկավարժական կազմի վերապատրաստման բարելավման խնդիրը: Մանկավարժների վերապատրաստման վրա կենտրոնացվածության մեծացումը պայմանավորված է դպրոցական պրակտիկայում զարգացման տեխնոլոգիաների և կրթության մեթոդների զանգվածային ներդրմամբ: Մինչդեռ մանկավարժական կադրերի պատրաստման համակարգը դեռևս բավարար չափով հաշվի չի առնում ժամանակակից կրթության օբյեկտիվ միտումները:

21-րդ դարի թիվ մեկ բնութագրիչը կյանքի ու արժեքների արագ զարգացում ու փոփոխականությունն է: Ուստի, միանգամայն օրինաչափ է, որ առաջին հերթին կարևորվում է հասարակության վաղվա օրն ու ապագան կանխորոշող մասնագետների գիտելիքների պարբերական թարմացումն ու կատարելագործումը, նոր ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան ցենզի ներդրումը: Մանկապարտեզի դաստիարակը, որն ունի ժամանակակից մանկավարժի համար առաջնային համարվող բնութագրիչ մասնագիատական և անձնային որակներ, կկարողանա ապահովել իր սաների համար վերջնարդյունքահեն կրթություն, ստեղծագործաբար մոտենալ իր աշխատանքին, դրա ընթացքում առաջացող խնդիրներին ու դրանով իսկ նպաստելով մտածող անհատի ձևավորմանը: Ասվածն, անշուշտ, հավաստում է հետազոտական աշխատանքի արդիականությունն ու կարևորությունը:

Աշխատանքի նպատակն է.

- Ուսումնասիրել ժամանակակից մանկավարժ-աշխատողի առջև դրված մանկավարժական պատրաստվածության ու կոմպետենտության առանցքային կետերը:
- Ներկայացնել մանկավարժի մասնագիտական կարողությունների զարգացման հնարավորությունները հետազոտական ու ստեղծագործական գործունեության, ինչպես նաև վերապատրաստումների միջոցով:

Գլուխ.1 Ժամանակակից մանկավարժ մասնագետն ու նրա մասնագիտական կոմպետենցիան

Կյանքը ժամանակակից աշխարհում չափազանց անկայուն է: Կրթության ինտենսիվ զարգացումը, այլընտրանքային ծրագրերի բազմազանությունը, կրթության ընթացակարգային կողմի հիմնարար փոփոխությունը կարևորում է մանկավարժի անձի, նրա դերի և գործունեության որակական փոփոխության խնդիրը կրթական գործընթացում: Կրթության էական փոփոխություններն անհնար են առանց դաստիարակի մասնագիտական գիտակցության հիմնարար փոփոխությունների: Նա

պետք է անընդհատ կատարելագործվի, փնտրի նոր գիտելիքներ: Մանկավարժը պետք է լինի ոչ թե գիտելիքի թարգմանիչ, այլ մարդ, ով կարողանում է ձևավորել երեխայի կրթական միջավայրը: Բացի այդ, հույժ կարևոր է, որ նա տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ օգտագործող լինի:

Հայտնվել են բազմաթիվ նոր գիտելիքներ, հասկացություններ, որոնք անհրաժեշտ են ժամանակակից մանկավարժին: «Կոմպետենտություն» հասկացությունն ակտիվորեն շրջանառության մեջ է ներկայումս և բնութագրում է մասնագետի մասնագիտական որակավորման համապատասխան մակարդակը: Կոմպետենտությունը դաստիարակի կարողությունն է՝ գործելու անորոշ իրավիճակում: Որքան բարձր է անորոշությունը, այնքան մեծ է այս կարողության դերը[1]:

Տարբեր նորամուծությունները գործնականում հաջող ներդնելու, նոր պայմաններում առաջադրված խնդիրներն իրականացնելու համար դաստիարակը պետք է ունենա մասնագիտական իրավասության անհրաժեշտ մակարդակ, իր գործունեության մեջ հաջողության հասնելու ցանկություն:

Մասնագիտական իրավասության ամենակարևոր հատկանիշը «երեխայի վրա կենտրոնանալն» է: Մանկավարժի ուշադրության կենտրոնացումը երեխայի վրա նպատակ ունի զարգացնել սովորողի մոտիվացիան, սովորցնել նրան ճանաչել շրջապատող աշխարհը, մարդկանց և ինքն իրեն: Այն ներառում է երեխայի նկատմամբ հոգատարություն, նրա նկատմամբ հետաքրքրություն, սեր, նրա անհատականության զարգացման խթանում և անձի առավելագույն ինքնաիրականացում:

Մասնագիտորեն գրագետ կարելի է անվանել այն դաստիարակին, ով բավականաչափ բարձր մակարդակով իրականացնում է մանկավարժական գործունեություն, մանկավարժական հաղորդակցություն, ուսման մեջ հետևողականորեն բարձր արդյունքներ է գրանցում:

Մանկավարժի մասնագիտական կոմպետենտությունը վերջինիս՝ վարքի որոշակի չափանիշների բավարարելու կարողությունն է: Չափանիշները, թե ինչպես պետք է իրականացվի կրթական գործընթացը, ինչպիսի գործունեություն պետք է

[1] Рассказова О.И. Формирование профессиональной компетентности будущих воспитателей детских дошкольных учреждений: научный дискурс проблемы / О.И. Рассказова, П.И. Рассказова // Формирование кадрового потенциала СПО – инновационные процессы на производстве и в профессиональном образовании. – 2016

ծավալել: Կոմպետենտությունն արտացոլում է գործունեության բարդ արդյունքը և ներառում է ոչ միայն գիտելիքներն ու հմտությունները (կարողությունները), այլև անձի անհատական հատկանիշները:

Մանկավարժի պրոֆեսիոնալիզմն ապահովվում է հետևյալ կարողություններով.

- ընդհանուր մշակույթում ընդունելի վարքային բաղադրիչ,
- անձի ինքնակատարելագործման ձգտում,
- ճանաչողական և ստեղծագործական ունակություններ,
- անձի արժեքային-իմաստային կողմնորոշում,
- հաղորդակցական հմտություններ,
- տեղեկատվական հմտություններ,
- սոցիալական և աշխատանքային հմտություններ,
- մասնագիտական կարողություններ[2]:

Սուբմշակութային կոմպետենցիան ենթադրում է.

- գիտելիքներ ազգային, համամարդկային մշակույթի ոլորտում,
- անհատական համակարգը արտացոլելու ունակություն,
- հանդուրժողականություն տարբեր էթնիկ մշակույթների նկատմամբ:

Անձնական ինքնակատարելագործման կոմպետենցիան ներառում է հետևյալ կետերը.

- Անձնական ներուժի զարգացման և իրացման մղում:
- Ինքնազարգացման ունակություն:

Կարելի է առանձնացնել ժամանակակից մանկավարժի մասնագիտական հիմնական կարողությունները.

- երեխաների հետ միասին սովորելու ունակություն, ինքնուրույն փակելով «ուսումնական բացերը»,
- կարողանալ պլանավորել և կազմակերպել սաների ինքնուրույն գործունեությունը,

[2]Соломенникова О.А. Структурно-функциональная модель развития профессиональной компетентности педагогов дошкольного образования в системе повышения квалификации / О.А. Соломенникова, Ю.А. Гладкова, С.С. Прищепа // Вестник РМАТ. – 2017. – №4. – С. 44-54.

- կարողանալ մոտիվացնել երեխաներին՝ ներառելով նրանց մի շարք միջոցառումներում, որոնք թույլ են տալիս զարգացնել պահանջվող կարողությունները,
- կարողանալ «բեմադրել» ուսումնական գործընթացը՝ օգտագործելով գործունեության կազմակերպման տարբեր ձևեր և ընդգրկելով երեխաներին տարաբնույթ աշխատանքներում՝ հաշվի առնելով նրանց հակումները և անհատական առանձնահատկությունները,
- ունենալ նախագծային մտածողություն և կարողանալ կազմակերպել սովորողների խմբային գործունեությունը,
- կարողանալ կազմակերպել երեխաների հայեցակարգային աշխատանքը[3]:

Ժամանակակից մանկավարժը պետք է առանձնանա բարձր ստեղծագործական ունակություններով, կենտրոնացած լինի ակտիվ ստեղծագործական գործունեության վրա, ունենա տեխնոլոգիական պատրաստվածություն: «Մարդ ծնվում են, անհատ դառնում են, անհատականությունը պահպանում են» հայտնի արտահայտությունը ևս մեկ անգամ փաստում է, որ մանկավարժը պետք է անհատականություն լինի իր աշխատանքում: Մանկավարժը ստեղծագործող է, այնքանով, որքանով, որ կարողանում է գիտելիքը հասցնել երեխաներին:

Ելնելով ժամանակակից պահանջներից՝ հնարավոր է որոշել մանկավարժի մասնագիտական կարողությունների զարգացման հիմնական ուղիները.

- Աշխատանք մեթոդական ասոցիացիաներում, ստեղծագործական խմբերում:
- Հետազոտական գործունեություն:
- Նորարարական գործունեություն, մանկավարժական նոր տեխնոլոգիաների զարգացում:
- Մանկավարժական աջակցության տարբեր ձևեր:
- Ակտիվ մասնակցություն մանկավարժական մրցույթներին և փառատոններին:
- Սեփական մանկավարժական փորձի կիսում:
- ՏՀՏ-ի օգտագործում և այլն:

[3] Соседенко Т.А. Профессиональная компетентность педагога дошкольного учреждения: теоретикометодологический аспект / Т.А. Соседенко, Р.Н. Досаева, Е.А. Подосинникова // Гуманитарные исследования. – 2014. – №3. – С. 152-156.

Բայց թվարկված մեթոդներից և ոչ մեկը արդյունավետ չի լինի, եթե մասնագետն ինքը չի գիտակցում սեփական մասնագիտական կարողությունները բարելավելու անհրաժեշտությունը: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնցում դաստիարակն ինքնուրույն գիտակցում է սեփական մասնագիտական որակների մակարդակը բարելավելու անհրաժեշտությունը: Սեփական մանկավարժական փորձի վերլուծությունն ակտիվացնում է դաստիարակի մասնագիտական ինքնազարգացումը, որի արդյունքում զարգանում են հետազոտական հմտություններ, որոնք հետո ինտեգրվում են մանկավարժական գործունեությանը:

Գլուխ 2. Համագործակցային մանկավարժության էությունը կամ կարևորությունը մանկավարժի մասնագիտական հմտությունների զարգացման գործում

Մասնագիտական կարողությունների զարգացումը, մասնագիտական փորձի յուրացումն ու արդիականացումը դինամիկ գործընթաց են, որոնք հանգեցնում են անհատական մասնագիտական որակների զարգացմանը, մասնագիտական փորձի կուտակմանը, ինչը ենթադրում է շարունակական զարգացում և ինքնակատարելագործում:

Կարելի է առանձնացնել մասնագիտական իրավասության ձևավորման փուլերը.

- ներդաշնակություն և զարգացման անհրաժեշտության գիտակցում,
- ինքնազարգացման պլանավորում (նպատակներ, խնդիրներ, լուծումներ)[4]:

Մանկավարժական գործունեության ընթացքում անհրաժեշտ է մշտապես կատարելագործել պրոֆեսիոնալիզմը, և ամեն անգամ թվարկված փուլերը կրկնվում են, բայց նոր որակով:

Անձնական փորձը, սեփական նախաձեռնությունը, մանկավարժական և հոգեբանական գիտելիքների խորացումը (աշխատանքային փորձի ավելացմանը զուգընթաց), մեթոդական տեխնիկայի կրկնակի փորձարկումը, անկասկած, նպաստում են մասնագետի զարգացմանը: Բայց մասնագետը դառնում է իսկական վարպետ, եթե դիտում, ուսումնասիրում և ստեղծագործաբար տիրապետում է

[4] Азаров Ю. П. Тайны педагогического мастерства — М.: Издательство Московского психолого-социального института; Воронеж: Издательство НПО «МОДЭК», 2004, с.43.

գործընկերների լավագույն փորձին: Ժամանակակից կրթական քաղաքականությունում մեթոդական այդպիսի համագործակցությունը անկյունաքարային է:

Ժամանակակից՝ համագործակցային մանկավարժությունը, դաստիարակության և կրթության մեթոդների և տեխնիկայի համակարգ է, որը հիմնված է հումանիզմի սկզբունքների և անձնական զարգացման ստեղծագործական մոտեցման վրա: Սա վերաբերմունք է կրթությանը որպես մանկավարժների, երեխաների, մանկավարժերի և երեխաների ստեղծագործական փոխազդեցություն[5]:

Ուսումնական գործընթացի մասնակիցները՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունում ակտիվ համագործակցության արդյունքում, լուծում են հետևյալ խնդիրները[6].

- երեխաների հետ հարաբերությունների և ուսուցման մեթոդների հստակ ուսումնասիրություն և տիրապետում,
- ընդհանուր՝ մոտակա ու հեռակա նպատակների որոշում,
- դրանց հասնելու համար համատեղ միջոցառումների կազմակերպում, մեթոդների մշակում,
- երեխաների հետ կրթական աշխատանք կազմակերպելու համար նրանց կարողությունների, ուսուցման առանձնահատկությունների ուսումնասիրություն, քննարկումներ,
- մանկավարժական կարողությունների նպատակահարմար օգտագործում՝ երեխաների և ծնողների հետ կրթական աշխատանք կազմակերպելու գործում,
- հաջողված փորձի ու մեթոդների հարստացում, շարունակականության ապահովում :

Մանկավարժական կազմի փոխգործակցության հիմքը հետևյալն է.

- բարդ խնդիրներ,
- մանկավարժական խնդիրների լուծման ուղիների համատեղ որոնում,
- համատեղ ջանքեր,

---

[5] Соловейчик С.Л., «Педагогика для всех», Книга III, глава II, стр.5.

[6] Ткаченко Е. П., Способы повышения эффективности взаимопонимания педагога с воспитанниками, https://solncesvet.ru/opublikovannyie-materialyi/sotrudnichestvo-uchiteley-predmetniko/, հասանելի է

- համատեղ աշխատանք՝ նախատեսված առաջադրանքների և չափորոշիչային պահանջների կատարման ուղղությամբ,
- կատարված աշխատանքի համատեղ վերլուծություն,
- մանկավարժական խնդիրների, ստացված արդյունքների վերլուծություն, նոր պլանների մշակում[7]:

Աշխատանքային պլանն, անգամ, երբ կազմվում է ողջ մանկավարժական խորհրդի մասնակցությամբ, աչքի է ընկնում հնարավորությունների և մասնակցության ձևերի բազմազանությամբ: Դրանք կարող են լինել կրթական միջոցառումներ, գիտելիքի հանրային ստուգատեսներ, ծնողական հանդիպումներ և դասախոսություններ: Համատեղ աշխատանքի յուրաքանչյուր շրջան (համատեղ միջոցառում, եռամսյակ, ուսումնական տարի) ավարտվում է ամփոփումով և վերլուծությամբ:

Հատկապես օգտակար է մանկավարժական խորհրդին, երեխայի հետ գործ ունեցող բոլոր մանկավարժներին ներգրավել գործունեության կոլեկտիվ վերլուծության մեջ: Նման դեպքում մանկավարժները ուսումնասիրում են սովորողների հետ իրենց գործընկերների աշխատանքի ոճը, հիմնական մեթոդներն ու տեխնիկան, բացահայտում հաջողությունները, խնդիրները, ձեռքբերումները, ուսուցիչների արդյունավետ աշխատելու ուղիները սաների և ծնողների հետ: Երբ կազմակերպվում է մանկավարժական աշխատանքի փորձի փոխանակում, աջակցվում, խթանվում է մանկավարժի ցանկությունը երեխային ճիշտ և տրամաբանված մանկավարժական աջակցություն ցուցաբերելը՝ ծնողների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելով: Միաժամանակ բարձրանում է մանկավարժական կազմի նախաձեռնողականությունը, մոտիվացիան:

Խոսելով մանկավարժի մասնագիտական զարգացման մասին՝ հնարավոր չէ չխոսել պորտֆոլիոյի ստեղծման մասին: Պորտֆոլիոն մասնագիտական գործունեության արտացոլումն է, որի ձևավորման գործընթացում տեղի է ունենում ինքնագնահատում և գիտակցվում է ինքնազարգացման անհրաժեշտությունը: Պորտֆոլիոյի օգնությամբ լուծվում է դաստիարակի ատեստավորման խնդիրը, քանի որ այստեղ հավաքվում և ամփոփվում են մասնագիտական գործունեության

[7] Ткаченко Е. П., Способы повышения эффективности взаимопонимания педагога с воспитанниками, https://solncesvet.ru/opublikovannyie-materialyi/sotrudnichestvo-uchiteley-predmetniko/, հասանելի է

արդյունքները: Պորտֆոլիոյի ստեղծումը լավ մոտիվացիոն հիմք է ինչպես դաստիարակի գործունեության, այնպես էլ նրա մասնագիտական կարողությունների զարգացման համար:



Գլուխ 3. Մանկավարժի մասնագիտական կարողությունների զարգացումը վերապատրաստումների, հետազոտական ու ստեղծագործական գործունեության միջոցով

Մասնագիտական վերապատրաստումները մանկավարժի հմտությունների ու մասնագիտական կարողությունների բարելավման ուղղություններից են: Տարբերվում են վերապատրաստումներն ըստ իրեն իրականացման մեխանիզմների: Թրեյնինգը ակտիվ, ինտենսիվ և խմբային վերապատրաստման ձև է մեկ կոնկրետ թեմայով: Այսինքն. վերապատրաստման մասնակիցն ինքը, վերապատրաստման ղեկավարի փոքր ուղղիչ ազդեցության օգնությամբ՝ ձևավորում է անհրաժեշտ և համապատասխան գիտելիքներ, հմտություններ և կարողություններ[8]:

Դասընթացի ընթացքում ստեղծվում են արդյունավետ ուսումնական գործիքներ, առաջացող իրավիճակները վերլուծվում են անմիջական մասնակցի տեսանկյունից: Դասընթացի ընթացքում ստացված եզրակացությունները, հատկապես եթե դրանք արվել են խնդրահարույց իրավիճակի անմիջական մասնակցի կամ դիտորդների կողմից, համարվում են հաջողված, և դրանք մնում են դասընթացի մասնակիցների աշխատանքային ակտիվներում: Փաստորեն, պարապմունքների

[8] Бакли Р., Кэйпл Дж. Теория и практика тренинга. СПб., 2002. С64.

ընթացքում կատարվում է ոչ միայն խնդրահարույց և հաճախ բնորոշ իրավիճակների մանրակրկիտ վերլուծություն, այլ ձևավորվում են տվյալ նմանատիպ իրավիճակում վարքի աշխատանքային և երբեմն ունիվերսալ ալգորիթմներ[9]:

Ինչպիսին էլ լինի վերապատրաստումների իրականացման տեխնիկան, կարծում ենք, ահռելի է դրանց դերը մանկավարժ մասնագետի հմտությունների կատարելագործման գործում:

Այսօրվա արագ փոփոխվող աշխարհում պահանջված կարողություն է վերլուծել տեղեկատվությունը և որոշել, թե որն է ամենակարևորը, հավաքել տեղեկատվություն մեկ ամբողջության մեջ, կարողանալ արտահայտել սեփական վերաբերմունքը նոր գաղափարների և գիտելիքների նկատմամբ: Ուսումնասիրած նյութի մասին ունենալ սեփական քննադատական, ստեղծագործական եզրակացությունները: Վերլուծություն, սինթեզ, համեմատություն, դասակարգում՝ սրանք հատուկ մտավոր գործողություններ են, որոնց զարգացման մակարդակը որոշում է անհատի ինտելեկտուալ կարողությունները: Քննադատական մտածողության մեթոդի ռազմավարությունների կիրառման արդյունքում կոնկրետ մտավոր գործողությունների զարգացումը ձևավորում է «մտածող մարդ»[10]:

Քննադատական մտածողության մեթոդը վերաբերում է ինտերակտիվ ուսուցման մեթոդներին: Աշխատանքի ինտերակտիվ ձևերի հիմքը գործունեությունն է: Դա սովորելն է՝ գործելով ու ինքնակրթվելով: Ինտերակտիվ ձևերը չեն ներառում պատմություն այն մասին, թե ինչպես պետք է երեխաներին սովորեցնել կամ ինչպես երեխաները պետք է ընկալեն տեղեկատվությունը: Ինտերակտիվ ձևերն ու մեթոդները հնարավորություն են տալիս և տանում են սաներին այն բանին, որ նրանք ինքնուրույն ընկալեն տեղեկատվությունը, մշակեն և փորձարկեն (կիրառեն) գիտելիքը և հաճախ իրենց կամքով: Դրա համար կան մտածված և խթանող հարցեր և որոշ տեխնիկա կամ, ինչպես դրանք կոչվում են քննադատական մտածողության մեթոդի շրջանակներում, ռազմավարություններ:

Քննադատական մտածողության մեթոդը ներառում է մի քանի ռազմավարությունների կիրառում, որոնք ընտրվում են որոշակի նպատակների հիման վրա՝ ուղղված դրանց հասնելուն: Քննադատական մտածողության մեթոդի ռազմավարություններից են մտագրոհը, գրառումներով կարդալը, հինգ տողերը,

[9] Биркенбиль В.Ф. Коммуникационный тренинг. Наука общения для всех. М., 2002, с. 84.
[10] Короткова М.В., Студеникин М.Т. Методика обучения истории в схемах, таблицах, описаниях. - М.: ВЛАДОС, 1999, с. 126.

եռանկյունացումը, կանգառներով կարդալը, հիմնաբառեր, կլոր սեղան, խճանկար և այլն: Ռազմավարությունների կիրառումը ենթադրում է, որ հենց սաներն են «բացահայտում» գիտելիքը, հարցեր տալիս, ենթադրություններ անում, իրենց կարծիքը հայտնում, այսինքն, հանդես են գալիս որպես ճանաչողության գործընթացի ակտիվ մասնակիցներ, սովորում են քննադատաբար մտածել: Ասվածն անշուշտ վերաբերում է ինչպես սովորողներին, այնպես էլ մանկավարժներին: Մրցունակ անհատականության համար մեծ նշանակություն ունի հետազոտական գործունեության տրամաբանության փաստացի տիրապետումը: Այսօր արդեն մանկապարտեզում երեխաներին սովորեցնում են ինքնուրույն հետազոտություն, սերմանում են հետազոտական մշակույթ, իսկ ժամանակակից մանկավարժը պետք է պատրաստակամ լինի սովորել իր սաների հետ, նրանց զուգահեռ նոր գիտելիքներ յուրացնել՝ օր օրի ավելի կատարելագործվելով:

Ստորև բերված աղյուսակային տվյալների համեմատությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քննադատական մտածողության մեթոդի եռաստիճան կառուցվածքը համապատասխանում է ուսումնասիրության փուլերին: Այսպիսով, հնարավոր է օգտագործել քննադատական մտածողության մեթոդը հետազոտական մշակույթ ձևավորելու և հետազոտության մեջ որոնման միջավայր ստեղծելու համար որպես գործընթաց, որը մշտապես ուղեկցում է ուսուցմանը: Եվ սա համապատասխանում է ժամանակակից կրթության պահանջներին, մրցունակ անհատականության դաստիարակության, մանկավարժական կազմի ինքնակրթության ու կատարելագործման համար:

Քննադատական մտածողությունը և հետազոտական գործունեության մեթոդի համատեղելիությունը.

Քննադատական մտածողություն զարգացնող դասի կառուցվածքը (3 փուլ)	Հետազոտության փուլերը
1-ին փուլ. մարտահրավեր կամ դրդում. Ակտիվ կրթական և ճանաչողական գործունեության համար հետաքրքրության ձևավորում, մոտիվացիա: Զբաղվել հիշելով այն, ինչ արդեն հայտնի է թեմայի վերաբերյալ:	1. Խնդրի սահմանում, խնդրահարույց հարցի շարադրում: Հետազոտության թեմայի, նպատակների և խնդիրների ձևակերպում
2-րդ փուլ. Իրականացում.	Առաջադրանքների իրականացում,

պատասխաններ անձնական փորձը նոր տեղեկություններով լրացում, ծրագրային նյութից:	այսինքն. բուն ուսումնասիրությունը, դրա տեսական և գործնական մասը
3-րդ փուլ. Արտացոլում (արտացոլում). Գիտելիքների համախմբում, նորի ըմբռնում	Ուսումնասիրության արդյունքները

Մանկավարժը, որն ինքը ստեղծագործ է հետազոտող ու նորարար, ձգտում է նաև մաքսիմալ կերպով հետազոտության մղել իր սաներին, հետաքրքրել նրանց, մղել գործողությունների նախ՝ թեմայի ուսումնասիրության, ապա նաև եզրահանգումների ու դրանց հիման վրա նոր քայլերի:

Ինչ վերաբերում է ստեղծագործականությանը, ապա այն մտածողության զարգացման բարձրագույն փուլն է, ըստ Բլումի տաքսոնոմիայի:

Մանկավարժի գործունեության մեջ ստեղծագործականության աստիճանը արտացոլում է այն, թե որքանով է նա օգտագործում իր կարողությունները նպատակներին հասնելու համար: Մանկավարժական ստեղծարարությունն ինքնին չի առաջանում:

Կարելի է առանձնացնել մանկավարժական ստեղծարարության հետևյալ մակարդակները[11].

1. Տեղեկատվության վերարտադրում. մանկավարժը կարողանում է վերարտադրել ուրիշների փորձը, լուծել պարզ խնդիրներ արդյունքի ճանապարհին, վերլուծել կոնկրետ իրավիճակներում ընդունված որոշումների արդյունավետությունը:

2. Հարմարվողական-պրագնոստիկ. մանկավարժը կարողանում է վերափոխել իրեն հայտնի տեղեկատվությունը, ընտրել սովորողների հետ փոխգործակցության ուղիներ, միջոցներ, մեթոդներ՝ հաշվի առնելով նրանց անձնային որակները:

3. Ռացիոնալացում. մանկավարժը ցույց է տալիս ռացիոնալացման ունակություններ (ոչ ստանդարտ մանկավարժական խնդիրներ լուծելու և օպտիմալ լուծումներ գտնելու կարողություն): Նրա ստեղծագործության մեջ կան անհատականության տարրեր:

[11] Сластенин В.А. и др. Педагогика: Учеб. пособие. - М.: «Академия», 2002, С. 42-44.

4. Հետազոտություն. մանկավարժը կարողանում է մշակել գործունեության իր համակարգը՝ դրա արդյունքի ուսումնասիրության հիման վրա:

Այսպիսով, մանկավարժի անձնական ստեղծագործականությունը դրսևորվում է մանկավարժական գործունեության տարբեր ասպեկտներում: Ստեղծագործականությունը որոշվում է մանկավարժի անհատականության ներուժով, որը ձևավորվում է նրա կուտակած սոցիալական փորձի, նոր գաղափարների, հմտությունների և կարողությունների հիման վրա, որոնք թույլ են տալիս գտնել և կիրառել յուրահատուկ լուծումներ, նորարարական ձևեր և մեթոդներ: Միայն գիտուն և սոցիալապես պատրաստված մանկավարժը կարող է ստեղծագործ երևակայության և փորձի միջոցով գտնել խնդրի լուծման նոր, ստեղծագործ ուղիներ և միջոցներ:

Գլուխ 4. Օրինակելի պարապմունք

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողությունը
Խոսքի զարգացում	Կրտսեր 2-րդ	Վայրի կենդանիներ	20-25ր
Նպատակ	Ընդլայնել և ամրապնդել երեխաների ունեցած գիտելիքները և պատկերացումները վայրի կենդանիների (արջ, սկյուռ, գայլ, նապաստակ) մասին : Հարստացնել բառապաշարը որջ, քոթոթ, փչակ, կատար, երախ բառերով: Ձևավորել ամբողջական նախադասություններով հարցերին պատասխանելու կարողություն:		
Անհրաժեշտ պարագաներ	Անտառային տեսարան, վայրի կենդանիների նկարներ, խաղալիքներ, կենդանիների ձայներով ձայնագրություններ: Մեղանային խաղեր՝«Հավաքիր նկարը» :		
<u>Խթանման</u>	Երեխաներին հարցնել ,թե տարվա ո՞ր եղանակն է և որ տոնն է լինում ձմռանը: Ասել ,որ առավոտյան նամակ եմ գտել: Պարզվում է՝ Ձմեռ		

<u>փուլ</u>	Պապը որոշել է անտառի կենդանիներին անակնկալ մատուցել, բայց մոռացել է, թե որ կենդանին ինչ է սիրում: Նա խնդրում է մեր օգնությունը:
<u>Իմաստի ընկալման փուլ</u>	Բրդոտ մորթով, թաթը ծուռ, Տանձ է սիրում ոչ թե նուռ: (արջ) Նկարագրել արջին : Հարցնել՝ ինչպես է ձմեռում անտառում և ինչու՞: Ի՞նչ է սիրում ուտել : Ինչպե՞ս ենք անվանում ձագին: Հարցնել, թե ի՞նչ կխնդրի Ձմեռ Պապից: Ցույց տալ նկարը: Մեծ ծառերի փչակում Ես իմ պալատն եմ սարքում ԵԻ ծառերի կատարին Ուտում ընկույզ ու կաղին: (սկյուռ) Նկարագրել սկյուռին : Ասել `որտեղ է նա ապրում: Ի՞նչ է ուտում : Ինչպե՞ս է անցկացնում ձմեռը: Ի՞նչ կխնդրի սկյուռը Ձմեռ Պապից: Գտնել նկարը : Երկար ականջ ,պոչը կարճ Վազվզում է շատ արագ, Ձմռանը մորթին փոխում, Ճերմակ ճերմակ է դառնում: (Նապաստակ) Նկարագրել նապաստակին:

	Ի՞նչ է սիրում ուտել: Ինչո՞ւ է փոխում մորթու գույնը : Ի՞նչ կխնդրի նապաստակը Ձմեռ Պապից: Գտնել նկարը: Մոխրագույն ,մեծ երախով Արագավազ կենդանի, Ոչխարներին թշնամի: (գայլ) Նկարագրել գայլին : Ի՞նչ է սիրում ուտել: Ինչպե՞ս է անցկացնում ձմեռը: Ի՞նչ կխնդրի գայլը Ձմեռ Պապից: Ինչպիսի՞ կենդանիներ են գայլը, սկյուռը, նապաստակը, արջը:Ինչու՞: Ֆիզկուլտ դադար Եթե մենք անտառ գնանք, Կտեսնենք արջ մի ծուռթաթ, Նապաստակին՝ ծառի տակ ԵԻ սկյուռի մի փչակ: Չի երևում գորշ գայլը Ասեք՝ ո՞րն է պատճառը: Հեռվում որսորդ երևաց… Էլ կենդանի չմնաց: Արտասանել՝ կատարելով համապատասխան շարժումները Լսել կենդանիների ձայների ձայնագրությունը, գուշակել: Խաղալ <<Հավաքիր նկարը >> խաղը:

Կշռադատման փուլ	Պարապմունքի այս փուլում փորձում ենք վերլուծական հարցերի միջոցով դուրս բերել հենքային գիտելիքը. - Ինչո՞ւ է նապաստակի մորթին ձմռանը սպիտակում, - Աշխատասե՞ր կենդանի է սկյուռը, ինչո՞ւ, - Ինչո՞ւ է սկյուռը ձմեռում փչակում, իսկ արջը՝ որջում և այլն: Հիշեցնել, թե ինչի մասին էր պարապմունքը: Ո՞ր հեքիաթներում են հանդիպում այդ կենդանիները: Երեխաներին ասել, որ նրանք օգնեցին Ձմեռ Պապին և անակնկալը կստացվի:
Շաբաթվա ընթացքում իրականացվող գործողություն-ներ.	Փայտե տախտակներով ձմեռող կենդանիների համար բույն ենք պատրաստել՝ ներգրավելով նաև ծնողներին: Ստացված տնակները գունավորել, գեղեցիկ տեսքի բերել ու փակցնել մանկապարտեզի բակում:

Թեման ընտրված է կրթական համալիր ծրագրով նախատեսված թեմային համապատասխան <<Վայրի կենդանիներ>>, ինչը ուսուցման և նպատակներով հանդերձ համապատասխանում է երեխաների պատրաստվածության մակարդակին:

Պարապմունքի նպատակն է ձեռք բերել ստեղծագործական հմտություններ, ձևավորել և ստեղծել պատկերացումներ կենդանիների, բնության, մարդկանց, ժամանակի և տարածության վերաբերյալ:

Հանգելով վերջնարդյունքին մանկավարժը ստեղծագործաբար է մոտեցել աշխատանքին նպաստելով անհատի ձևավորմանը՝ անկախ առաջացած խնդիրներից՝ ձևավորել երեխայի կրթման միջավայրը:

Պարապմունքը ծառայեց իր նպատակին:

Թիվ 56 մ/մանկապարտեզի ղեկավար ՝ Մ. Հովհաննիսյան

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպած վերապատրաստման շրջանակներում դիտարկեցի թ. 56 մ/մանկապարտեզի կրտսեր երկրորդ «բ» խմբի դաստիարակ Ալիտա Ավագյանի պարապմունքը՝ «Խոսքի զարգացում» մեթոդիկայից:

Թեման, նպատակը, ծրագրային բովանդակությունը և տևողությունը համապատասխանում էին տարիքային խմբին: ԽԻԿ համակարգով կազմակերպված ուսուցումը տեղին էր և արդյունավետ, դաստիարակը օգտագործեց երեխաների ուշադրությունը կենտրոնացնելու մեթոդներ և հնարներ, ստեղծեց հուզական մթնոլորտ, առաջացրեց հետաքրքրություն:

Պարապմունքը հագեցած էր դիտողական բազմազան նյութերով, դիդակտիկ խաղերով:

Երեխաներին շատ դուր եկավ պարապմունքը, դաստիարակը հասավ առաջադրված նպատակին:

Կարծում եմ, որ դաստիարակը կարևոր և արդիական թեմա է ընտրել, ներկայիս մանկավարժները պետք է քայլեն ժամանակին համընթաց, կատարելագործեն իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները վերապատրաստումների, ստեղծագործական և հետազոտական գործունեության, ինքնակրթության,տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, առաջավոր փորձի ուսումնասիրման միջոցով:

Աշխատանքը միտված է վերոհիշյալ խնդիրների լուծմանը:

թ. 56 մ/մանկապարտեզի մեթոդիստ՝ Կարինե Պետոյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, 21-րդ դարի մանկավարժին, ում հեղինակությունն այլևս չի կարող աճել զուտ մասնագիտական գիտելիքի տեղատարափի ու մեխանիկական փոխանցման արդյունքում: Ժամանակակից մանկավարժն իր մեջ պետք է ամփոփի կերպարային մի քանի համադրություններ ու կարողանա ամբողջացնել արագ կողմնորոշվելու, իրավիճակն ու ժամանակը կառավարելու և որ ամենակարևորն է լսարանին միշտ հետաքրքրելու, իր մարդկային որակներով առաջնորդելու ու բազմաթիվ այլ հատկանիշներ: Ուստի ակնհայտ է, որ

1. դաստիարակն անընդհատ պետք է ընթանա մարդկային ու մասնագիտական աճի ուղիով, որպեսզի կարողանա կառավարել իրավիճակն ու կազմակերպել կրթական գործընթացն հավուր պատշաճի,
2. ժամանակի կրթության պահանջը ցկյանս կրթություն է, ինչը ենթադրում է հետազոտական ու վերլուծական հմտությունների զարգացում:

Ստեղծագործականությունը մտածողության բարձրագույն ձևն է, որն անընդհատ մարզանքի կարիք ունի, դրա զարգացման համար պետք է գնալ ինքնակրթության ու ինքնակատարելագործման, եղածով գիտելիքներով չսահմանափակվելու գիտակցական ուղիով: Անընդհատ կատարելագործվող ու ինքնակրթվող մանկավարժը իր գործունեությամբ կենդանի օրինակ է իր սաների համար և միայն այդ ճանապարհով կարող է ապահովել լավագույն կրթություն ու դաստիարակություն: Իսկ դրա զարգացման հետաքրքրական, հաճելի ու օգտակար միջոց է հետազոտությունն ու դրա միջոցով ինքնակրթությունը, որն անշուշտ իր անմիջական ազդեցությունն է ունենալու պարապմունքի որակի վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Азаров Ю. П. Тайны педагогического мастерства — М.: Издательство Московского психолого-социального института; Воронеж: Издательство НПО «МОДЭК», 2004.
2. Бакли Р., Кэйпл Дж. Теория и практика тренинга. СПб., 2002.
3. Биркенбиль В.Ф. Коммуникационный тренинг. Наука общения для всех. М., 2002.
4. Короткова М.В., Студеникин М.Т. Методика обучения истории в схемах, таблицах, описаниях. - М.: ВЛАДОС, 1999.
5. Полиаспектная подготовка современного педагога: Коллективная монография/Науч. ред. Г. А. Медяник. — М.: Академия Естествознания, 2011.
6. Рассказова О.И. Формирование профессиональной компетентности будущих воспитателей детских дошкольных учреждений: научный дискурс проблемы / О.И. Рассказова, П.И. Рассказова // Формирование кадрового потенциала СПО – инновационные процессы на производстве и в профессиональном образовании. – 2016
7. Соломенникова О.А. Структурно-функциональная модель развития профессиональной компетентности педагогов дошкольного образования в системе повышения квалификации / О.А. Соломенникова, Ю.А. Гладкова, С.С. Прищепа // Вестник РМАТ. – 2017. – №4. – С. 44-54.
8. Соседенко Т.А. Профессиональная компетентность педагога дошкольного учреждения: теоретикометодологический аспект / Т.А. Соседенко, Р.Н. Досаева, Е.А. Подосинникова // Гуманитарные исследования. – 2014. – №3. – С. 152-156.
9. Сластенин В.А. и др. Педагогика: Учеб. пособие. - М.: «Академия», 2002.